ԵՐԵՔ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Սույն թվի օգոստոսի 5-ին Թբիլիսիում տեղի ունեցավ Սովետական Միության երեք քրիստոնյա եկեղեցիների Հովվապետների հանդիպումը, քրիստոնյա աշխարհին և եկեղեցիներին խաղաղության պահպանման համար կոչ ուղղելուն առթիվ:

Ամսի 2-ին Վեհափառ Հայրապետը Ռուբեն Արքեպիսկոպոսի, Սուրեն Եպիսկոպոսի և Գարեգին Մ. Վարդապետի ուղեկցությամբ մեկնեց Թբիլիսի: Լենինականում Վեհին դիմավորեցին քահանայական դասը և ժողովուրդը:

Օգոստոսի 3-ին Վեհափառը ժամանեց Թբիլիսի: Նրան դիմավորեցին Վրաց Կաթողիկոսի ներկայացուցիչները, Վրաստանի կրոնական գործերի կոմիտեի նախագահը, Թբիլիսիի հայոց քահանայական դասը և թեմական խորհրդի ներկայացուցիչները:

Նույն օրը, Վեհը այցելեց Վրաց Կաթողիկոս Նորին Սրբություն Կալիստրատին և ջերմ ընդունելության մթնոլորտում ծանոթացավ ժողովի օրակարգին: Թեյասեղանի շուրջը տեղի ունեցան փոխադարձ ջերմ ողջույններ:

Ամսի 4-ին Թբիլիսի ժամանեց Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբազնություն Ալեքսին, հոգևոր հետևորդների ուղեկցությամբ:

Նույն օրը, Ամենայն Հայոց Հայրապետը և Նորին Սրբազնություն Ալեքսին հանդիպում ունեցան և որոշեցին հաջորդ օրվա՝ ամսի 5-ին տեղի ունենալիք ժողովի կարգը:

Ամսի 5-ին Վրաց Կաթողիկոսարանում երեք Հովվապետները իրենց հոգևոր հետևորդներով նստեցին խորհրդակցության: Նիստը բացվեց աղոթքով և երգեցողությամբ: Նիստին նախագահ ընտրվեց Վրաց Կաթողիկոս Նորին Սրբություն Կալիստրատը, որը հակիրճ ճառով բացատրեց սույն ժողովի պատմական նշանակությունը, նախ խաղաղությունը համայն աշխարհում պաշտպանելու տեսակետն աչքի առաջ ունենալով և երկրորդ՝ երեք Հովվապետների եղբայրական հանդիպումը որպես նոր երևույթ և նոր էջ համագործակցության ճանապարհին: Այնուհետև ընթերցվեց և հաստատվեց այս առթիվ կազմված կոչը, որը հրավիրում է աշխարհի քրիստոնյա համայն եկեղեցիների կրոնավորներին և հավատացյալ համայնքներին՝ միասնաբար պաշտպանել խաղաղությունը համայն աշխարհում, հետ մղելով պատերազմի սպառնալիքը: Կոչն ընդունվեց հոտնկայս, աղոթքների ջերմ մթնոլորտում: Կոչն ստորագրեցին երեք Հովվապետները և կնքեցին իրենց կնիքներով:

Այնուհետև կարդացվեց ժողովի արձանագրությունը և ներկաների կողմից ստորագրվելուց հետո, նիստը փակվեց աղոթքով և հոգևոր երգեցողությամբ: Ապա ժողովականները հյուրասիրվեցին թեյով և մրգով: Հովվապետները հաջորդ օրը Սիոնի մայր եկեղեցում մասնակցեցին խաղաղության Ս. Պատարագին և մաղթանքին: Նույն օրը Վրաց Կաթողիկոսը հյուրերին հրավիրեց ճաշի, որը տեղի ունեցավ ջերմ և սիրալիր մթնոլորտում:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Ս. Էջմիածին հրավիրեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսին և Վրաց Կաթողիկոս Նորին Սրբազնություն Կալիստրատին իրենց հոգևոր շքախմբերով հանդերձ, ծանոթանալու համար հայ ժողովրդի հնադարյան կոթողներին և նրա ներկա հոյակապ վերելքին: